Մարդու
Իրավունքների
Տուն
Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

հեղինակ՝ Տաթևիկ Ղարիբյան
Երևան, 2025 թ.

«Մարդու իրավունքների տուն Երևան»
իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանում հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը (այսուհետ նաև՝ SLAPP-եր) տարեցտարի ավելանում են: 2023-2024 թթ. փաստաթղթավորվել է առնվազն 33 հայց՝ բնապահպան ակտիվիստների, իրավապաշտպանների և լրագրողների դեմ: Այս հայցերը ներկայացվում են պաշտոնատար անձանց կամ խոշոր ընկերությունների կողմից՝ թիրախավորելով հանրային մասնակցության գործողությունները: Դրանք նպատակ ունեն լռեցնելու հանրային կարևորություն ունեցող հարցեր ու խնդիրներ բարձրաձայնող անձանց: Սովորաբար նման հայցերը ներկայացվում են պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի համար՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի հիման վրա: Հայցվորները հատկապես մեծ ու անհամաչափ պահանջներ են ներկայացնում, կիրառում են դատավարական հնարքներ՝ դատական ընթացակարգերը երկարաձգելու ու ավելի ծախսատար դարձնելու նպատակով: Դատական գործընթացներն օգտագործվում են քննադատության դեմ, ավելի լայն արշավի մաս են կազմում և նպատակ ունեն ահաբեկել, հետապնդել կամ վախեցնել պատասխանողներին:

2024 թ.-ին հանրային մասնակցության դեմ հայցերի խնդրի միջազգային կարգավորումներում տեղի են ունեցել մի շարք կարևոր զարգացումներ: Մասնավորապես, 2024 թվականի ապրիլին ԵՄ-ն ընդունեց հակա-SLAPP-երի վերաբերյալ դիրեկտիվը[1], ինչպես նաև SLAPP-երի դեմ պայքարի վերաբերյալ առա-ջարկությունը[2]: Դիրեկտիվը նախատեսում է նվազագույն միջոցներ, որոնք ԵՄ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն SLAPP-երի դեմ պայքարելու ուղղությամբ: Հայաստանը ԵՄ անդամ պետություն չէ, սակայն 2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որով ընդունել է հանձնառություն իր օրենսդրությունն աստիճանաբար Եվրոպական միության օրենսդրության համապատասխան մասերին մոտարկելու վերաբերյալ[3]:

Եվրոպայի խորհրդի կողմից 2024 թվականի ապրիլին ընդունվեց առաջարկություն[4], որը նախատեսում է ավելի համապարփակ շրջանակ՝ SLAPP-երի կանխարգելման և վերացման համար: Թեև առաջարկությունն իրավաբանական պարտադիր ուժ չունի, այն արտացոլում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) իրավական պրակտիկան, որի համաձայն հանրային հետաքրքրություն ներկայացնող քննարկումները պահանջում են հատուկ պաշտպանություն: Առաջարկությունը նաև նախատեսում է, որ հանրային մասնակցության դեմ ուղղված բոլոր չարաշահող դատական գործընթացներում պետք է հասանելի լինեն վաղ փուլերում հայցերի մերժման մեխանիզմներ[5]: Հայաստանը՝ որպես ԵԽ անդամ պետություն պարտավոր է հաշվի առնել այս Առաջարկությունը:

1 Directive (EU) 2024/1069 of the European Parliament and of the Council on protecting persons who engage in public participation from manifestly unfounded claims or abusive court proceedings ('Strategic lawsuits against public participation') https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32024L1069

2 Commission Recommendation (EU) 2022/758 of 27 April 2022 on protecting journalists and human rights defenders who engage in public participation from manifestly unfounded or abusive court proceedings ('Strategic lawsuits against public participation') https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32022H0758

3 Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=124389

4 Recommendation CM/Rec (2024)2 of the Committee of Ministers to member States on countering the use of strategic lawsuits against public participation (SLAPPs) (Adopted by the Committee of Ministers on 5 April 2024 at the 1494th meeting of the Ministers' Deputies), Preamble, https://rm.coe.int/0900001680af2805

5 Նույն տեղում

Սույն զեկույցի առաջին մասում ընդհանուր ամփոփել ենք հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի բնութագրիչները, քննարկել այդ ռազմավարական հայցերին առնչվող հարցեր, այնուհետ անդրադարձել ենք հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի միջազգային կարգավորումներին, վերլուծել Հայաստանում արձանագրված դեպքերը: Զեկույցն ամփոփել ենք տարբեր գերատեսչություններին ուղղված առաջարկություններով:

Ի՞ՆՉ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԸ

Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը իրավական գործողություններ են, որոնք նպատակ ունեն կանխելու, զսպելու, սահմանափակելու կամ պատժելու հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ ազատ արտահայտումը և հանրային մասնակցության հետ կապված իրավունքների իրացումը: Նմանատիպ հայցերը նախաձեռվում են նպատակ ունենալով հետապնդել կամ վախեցնել թիրախային անձանց, շարունակական բնույթի են, նաև հաճախ սպառնում են հայցերի թիրախում հայտնված անձանց կամ խմբերին[6]:

SLAPP-ները դրսևորվում են տարբեր ձևերով, և կարող են ունենալ բազմաթիվ հատկանիշներ: Եվրոպայի խորհրդի «Հանրային մասնակցության դեմ ուղղված ռազմավարական դատական հայցերի կիրառման դեմ պայքարի վերաբերյալ» CM/Rec (2024)2 առաջարկությունը (այսուհետ՝ ԵԽ CM/Rec (2024)2 առաջարկություն) ի թիվս այլ հարցերի անդրադառնում է SLAPP-երին բնորոշ հատկանիշներին, որոնք ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալ տարրերով.

ա. հայցվորը փորձում է օգտագործել ուժերի անհավասարակշռությունը, օրինակ՝ իր ֆինանսական առավելությունը կամ քաղաքական և հասարակական ազդեցությունը, որպեսզի ճնշում գործադրի պատասխանողի վրա,

բ. հայցվորի ներկայացրած փաստարկները մասամբ կամ ամբողջությամբ անհիմն են,

գ. հայցվորի պահանջներն անհամաչափ են, չափազանց մեծ կամ ոչ ողջամիտ,

դ. հայցը ենթադրում է օրենքների կամ ընթացակարգերի չարաշահում,

ե. հայցվորը դիմում է ընթացակարգային և դատական հնարքների՝ նպատակ ունենալով ավելացնել պատասխանողի ծախսերը, օրինակ՝ գործի քննությունը ձգձգելով, ընտրելով հանրային մասնակցության համար աննպաստ կամ պատասխանողի համար անհարմար դատական վայր, ծանրաբեռնելով գործի ընթացքը կամ վարելով ապարդյուն բողոքարկման գործընթացներ,

զ. իրավական գործողությունը դիտավորյալ ուղղված է անհատների դեմ՝ շրջանցելով կազմակերպությունները, որոնք պատասխանատու են վիճարկվող գործողությունների համար,

է. իրավական գործողությունը ուղեկցվում է հասարակական կապերի արշավով, որը նպատակ ունի հանրային քննարկման մասնակիցներին վախեցնելու, վարկաբեկելու կամ ճնշելու կամ հանրության ուշադրությունը բուն խնդրից շեղելու,

ը. հայցվորը կամ նրա ներկայացուցիչները իրավական գործընթացների սպառնալիքներ են ներկայացնում, հետապնդում կամ վախեցնում են պատասխանողին կամ նախկինում նման գործողություններ են կատարել,

6 Recommendation CM/Rec (2024)2 of the Committee of Ministers to member States on countering the use of strategic lawsuits against public participation (SLAPPs) (Adopted by the Committee of Ministers on 5 April 2024 at the 1494th meeting of the Ministers' Deputies), https://rm.coe.int/0900001680af2805

թ. հայցվորը կամ առնչվող կողմերը նախաձեռնում են բազմաթիվ, համակարգված կամ միջսահմանային իրավական գործողություններ նույն փաստերի հիման վրա կամ նմանատիպ հարցերի առնչությամբ,

ժ. հայցվորը հետևողականորեն հրաժարվում է դիմել ոչ դատական մեխանիզմներին՝ հարցի լուծման համար:

SLAPP-երը պարտադիր չէ, որ ներառեն այս բոլոր հատկանիշները, սակայն որքան դրանց թիվն ավելի մեծ է, այնքան ավելի հավանական է, որ իրավական գործողությունը կարող է համարվել SLAPP:

SLAPP-ը նաև վտանգավոր են, քանի որ կարող են ունենալ մի շարք բացասական հետևանքներ: Առաջին հերթին, դրանք կարող են բացասաբար ազդել ժողովրդավարության ապահովման վրա՝ նպատակ ունենալով խրախուսել հանրային մասնակցությունից հրաժարումը, ճնշել խոսքի ազատությունը, նվազեցնել իրավունքի գերակայությունը: Մինչդեռ պետության պարտավորությունն է ապահովել անվտանգ ու բարենպաստ միջավայր՝ առանց վախի հանրային քննարկումներին մասնակցելու համար, նույնիսկ երբ ներկայացվող կարծիքները հակասում են իշխանությունների կամ հանրության որոշակի մասի տեսակետներին:

Հանրային շահը պետք է դիտարկվի լայնորեն, քանի որ այն ընդգրկում է բոլոր այն հարցերը, որոնք հետաքրքրում են հանրությանը և ազդեցություն ունեն նրա վրա, այդ թվում՝ հակասական հարցերը: Հանրությունը իրավունք ունի տեղեկացված լինել հանրային շահի վերաբերյալ հարցերի մասին, իսկ լրագրողներն ու լրատվամիջոցներն պետք է հնարավորություն ունենան այդ հարցերի մասին համակողմանի տեղեկատվություն ու գաղափարներ փոխանցելու:

Բազմակարծությունը՝ այդ թվում՝ փոքրամասնությունների և հիմնական տեսանկյունից տարբերվող կարծիքների փոխանակումը, էական նշանակություն ունի համակողմանի հանրային քննարկում ապահովելու և լավ տեղեկացված ու ակտիվ քաղաքացիական հասարակություն ձևավորելու համար: Յուրաքանչյուր անձ ունի հանրային մասնակցության իրավունք՝ այն է մասնակցելու հանրային քննարկումներին և հասարակական գործերին՝ առանց վախի կամ խտրականության: «Յուրաքանչյուր անձ» հասկացությունը ներառում է ազդակիր համայնքները, հանրային հարցերում ներգրավված անձանց, այդ թվում՝ լրագրողները, մեդիա դերակատարները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, բնապահպանական և կոռուպցիայի դեմ պայքարող միությունները, ակտիվիստները, միությունները, իրավաբանները, իրավապաշտպանները, գիտնականները, բլոգերները, մշակութային դերակատարները և այլն[7]:

SLAPP-երը հիմնականում թիրախավորում են հանրային ազդակիր համայնքներին, իրավապաշտպաններին, լրագրողներին, գիտնականներին և ունեն հանրային մասնակցությունը սառեցնող ազդեցություն:

Իշխանության չարաշահումը, իրավական գործողություններ իրականացնելով կամ սպառնալով, փոքրամասնությունների կամ քննադատական ձայները լռեցնելու նպատակով, հանրային մասնակցության վրա սառեցնող ազդեցություն են ունենում[8]:

7 Recommendation CM/Rec (2024)2 of the Committee of Ministers to member States on countering the use of strategic lawsuits against public participation (SLAPPs) (Adopted by the Committee of Ministers on 5 April 2024 at the 1494th meeting of the Ministers' Deputies), Point 4 (a) https://rm.coe.int/0900001680af2805

8 Recommendation CM/Rec (2024)2 of the Committee of Ministers to member States on countering the use of strategic lawsuits against public participation (SLAPPs) (Adopted by the Committee of Ministers on 5 April 2024

Հետազոտությունները վկայում են, որ Եվրոպայում SLAPP-երի քանակը յուրաքանչյուր տարի ավելանում է[9]: Եվրոպայում ընդդեմ SLAPP-երի կոալիցիայի կողմից իրականացված հետազոտությունների համաձայն՝ 2020-2021 թթ. վերլուծության է ենթարկվել 570 գործ, 2023 թվականին՝820 գործ, իսկ 2024 թվականին գործերի թիվը հասել է 1049-ի, որից 166-ը ներկայացվել են 2023 թվականին: 2022 թ. և 2023 թ. Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն Հայաստանում լրատվամիջոցների և լրագրողների դեմ 71 նոր հայց է արձանագրել (2022 թ.-ին 35 գործ և 2023 թ.-ին 36 գործ)[10]:

9 Եվրոպայում ընդդեմ SLAPP-երի կոալիցիա, 2024թ. հետազոտություն, https://www.the-case.eu/wp-content/uploads/2024/12/CASE-2024-report-vf_compressed-1.pdf
10 Նույն տեղում, էջ 14 https://www.the-case.eu/wp-content/uploads/2024/12/CASE-2024-report-vf_compressed-1.pdf

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Եվրոպայի խորհրդի CM/Rec (2024)2 առաջարկությունը, որն ընդունվել է 2024 թ. ապրիլի 5-ին Նախարարների կոմիտեի կողմից, անդրադառնում է հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի վերաբերյալ մի շարք հարցերին: Մասնավորապես, սահմանում է հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը, դրանց տեսակները, ներկայացնում է առաջարկություններ պետության կողմից օրենսդրական երաշխիքների, պաշտպանության միջոցների և թափանցիկության ապահովման, ինչպես նաև SLAPP-երի թիրախային խմբերի և տուժողների աջակցության վերաբերյալ, ընդգծում է իրազեկման, կրթության և վերապատրաստումների կարևորությունը և ազգային ու միջազգային համագործակցությունը այս ոլորտում:

Եվրոպական միության 2024/1069 դիրեկտիվը[11] (այսուհետ նաև՝ 2024/1069 դիրեկտիվ), որն ընդունվել է 2024 թ. ապրիլի 11-ին, նույնպես սահմանում է հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի տուժողների պաշտպանության հարցերը: Անդրադառնում է ընթացակարգային երաշխիքներին, անհիմն հայցերի վաղ փուլում մերժմանը, հանրային մասնակցության դեմ դատական ընթացակարգերի չարաշահումներից պաշտպանության միջոցներին, երրորդ երկրների կողմից որոշումներից պաշտպանությանը և մի շարք այլ խնդիրներին:

ԵՄ Եվրոպական հանձնաժողովի կողմից 2022 թ. ապրիլի 27-ին ընդունվել է թիվ 2022/758 առաջարկությունը[12] (այսուհետ նաև՝ թիվ 2022/758 առաջարկություն)՝ հանրային մասնակցություն ցուցաբերող լրագրողների և իրավապաշտպանների՝ ակնհայտորեն անհիմն կամ չարաշահված դատական գործընթացներից պաշտպանության մասին: Այս SLAPP-երի դեմ փաթեթը ավելի լայնածավալ նախաձեռնությունների շարքի մի մաս է կազմում, որի նպատակն է խթանել լրատվության ազատությունն ու բազմակարծությունը ԵՄ-ում՝ բարելավելու լրագրողների անվտանգության վիճակը:

ԵԽ CM/Rec (2024)2 առաջարկությունը սահմանում է, որ անդամ պետությունները պարտավոր են ապահովել, որ ազգային իրավական համակարգերը ընդգրկեն համընդհանուր իրավական շրջանակ և կառուցվածքային ու ընթացակարգային երաշխիքներ՝ SLAPP-երի վնասակար ազդեցությունը կանխարգելելու և նվազեցնելու համար: Բացի այդ պետք է միջոցներ ձեռնարկեն՝ SLAPP համարվող հայցերի վերաբերյալ թափանցիկությունը ապահովելու համար[13]:

11 Directive (EU) 2024/1069 of the European Parliament and of the Council on protecting persons who engage in public participation from manifestly unfounded claims or abusive court proceedings ('Strategic lawsuits against public participation') https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32024L1069

12 Commission Recommendation (EU) 2022/758 of 27 April 2022 on protecting journalists and human rights defenders who engage in public participation from manifestly unfounded or abusive court proceedings ('Strategic lawsuits against public participation') https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32022H0758

13 Recommendation CM/Rec (2024)2 of the Committee of Ministers to member States on countering the use of strategic lawsuits against public participation (SLAPPs) (Adopted by the Committee of Ministers on 5 April 2024 at the 1494th meeting of the Ministers' Deputies), Point 20 https://rm.coe.int/0900001680af2805

ԵՄ անդամ պետությունները պետք է պահպանեն կամ, ըստ անհրաժեշտության, ընդունեն օրենսդրական ակտեր կամ ձեռնարկեն այլ միջոցներ՝ կանխելու SLAPP-երը: Նրանք պետք է նաև լինեն զգոն՝ ապահովելու, որ օրենսդրությունը, պատասխանատվության ու պաշտպանության միջոցները չկիրառվեն խտրական կամ կամայական կերպով հանրային մասնակցության դեմ[14]:

Վերոգրյալ փաստաթղթերը սահմանում են հանրային մասնակցության դեմ հայցերի վաղ փուլերում մերժման անհրաժեշտությունը[15]. դատարանները իրենց նախաձեռնությամբ պետք է կարողանան վաղ փուլերում մերժել հայցը՝ այն որակելով որպես SLAPP: Պատասխանող կողմը պետք է հնարավորություն ունենա ներկայացնել վաղ փուլերում հայցերի մերժման միջնորդություններ, որպեսզի հակազդեն հանրային շահի հարցերի քննարկման վրա SLAPP-ների վնասակար ազդեցությանը:

Որպես ընթացակարգային երաշխիք է նախատեսվում պատասխանողի՝ դատական ծախսերից ապահովված լինելու հնարավորությունը: ԵՄ անդամ պետությունները խրախուսվում են իրենց ազգային իրավական համակարգերում սահմանել համապատասխան դրույթներ, որոնք դատարաններին հնարավորություն կընձեռեն՝ SLAPP ճանաչված իրավական հայցի դեպքում պարտավորեցնել հայցվորին կրել դատական բոլոր ծախսերը, ներառյալ պատասխանողի իրավաբանական ներկայացուցչության ծախսերը[16]:

Պետությունները պետք է նախաձեռնեն վնասների հատուցման համապարփակ շրջանակ: Մասնավորապես, ԵՄ անդամ պետությունները պետք է նպաստավոր պայմաններ ստեղծեն, որպեսզի SLAPP-երի զոհերը իրավական գործընթացների ժամանակ ստանան զոհի կարգավիճակ և ամբողջությամբ փոխհատուցվեն SLAPP-երի հետևանքով կրած վնասների համար, ներառյալ թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական վնասները, օրինակ՝ եկամուտի կորուստը և հոգեբանական տառապանքը, ինչպես նաև կատարված բոլոր ծախսերի համար, օրինակ՝ իրավաբանական և վարչական ծախսերը փոխհատուցելու համար[17]:

Անդամ պետությունները պետք է իրենց ազգային իրավական համակարգերի հնարավորությունների շրջանակներում նախատեսեն վնասների առավելագույն սահմանաչափ՝ կանխելու պատասխանողների նկատմամբ չարաշահող բնույթ ունեցող կամ անհամաչափ ֆինանսական պատիժները, որոնց արդյունքում նրանք կվախենան հանրային մասնակցությունը շարունակել և կխուսափեն իրավական գործընթացներ սկսել[18]:

Անդամ պետությունները պետք է ներդնեն արդյունավետ, համաչափ պատժամիջոցների համակարգ՝ SLAPP-երը կանխելու համար[19]: Դրանք պետք է համաչափ լինեն հայցվորի առկա ռեսուրսներին, որպեսզի նաև ունենան կանխարգելիչ ազդեցություն հետագա SLAPP հայցվորների համար:

Բացի վերոգրյալից՝ SLAPP-երի թիրախային խմբերին և տուժողներին պետությունները պետք է տրամադրեն իրավաբանական, ֆինանսական, հոգեբանական աջակցություն[20]:

Իրավաբանական աջակցություն. Անհրաժեշտության դեպքում և ազգային օրենսդրության համաձայն, անդամ պետությունները պետք է դիտարկեն անվճար իրավաբանական օգնություն

14 Ibid, Point 22
15 Recommendation CM/Rec (2024)2, Point 25, Directive (EU) 2024/1069, Article 6 (b), Article 11
16 Recommendation CM/Rec (2024)2, Point 38, Directive (EU) 2024/1069, Article 10, 14
17 Recommendation CM/Rec (2024)2, Point 41
18 Ibid, Point 42
19 Ibid, Point 44, Directive (EU) 2024/1069, Article 15
20 Ibid, Points 50–53

տրամադրելու համապատասխան միջոցների հասանելիության ապահովումը:

Ֆինանսական աջակցություն. Անդամ պետությունները պետք է դիտարկեն SLAPP-երի զոհերին ֆինանսական աջակցություն տրամադրելու հնարավորությունը՝ համագործակցելով լրագրող-ների, լրագրողների միությունների, արհմիությունների և համապատասխան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ազգային ֆոնդերի, դրամաշնորհների և/կամ այլ նպատակային աջակցության միջոցների ստեղծման միջոցով:

Հոգեբանական աջակցություն. SLAPP-երի թիրախները և տուժողները կարող են ունենալ մասնագիտական հոգեբանական աջակցության հասանելիության կարիք, ինչպիսիք են ուղղակի խորհրդատվությունը, համապատասխան առողջապահական մարմիններին ուղղորդումը կամ ֆինանսական օգնությունը: Անդամ պետությունները պետք է խրախուսեն հանրային առողջապահական մարմիններին պատշաճ ուշադրություն հատկացնել և ռեսուրսներ տրամադրել SLAPP-երի թիրախներին և զոհերին ծառայությունների մատուցման համար:

Այսպիսով, Եվրոպայի խորհրդի CM/Rec (2024)2 առաջարկությունն ու ԵՄ 2024/1069 դիրեկտիվը սահմանում են SLAPP-երի կանխարգելման և տուժողների պաշտպանության համար անհրաժեշտ օրենսդրական և ընթացակարգային երաշխիքներ: Դրանք, ի թիվս այլ հարցերի, ընդգծում են անհիմն հայցերի վաղ փուլում մերժման, դատական ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև SLAPP-երի զոհերին իրավաբանական, ֆինանսական և հոգեբանական աջակցություն տրամադրելու կարևորությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում վերջին տարիներին փաստաթղթավորել ենք հանրային մասնակցության դեմ ռազմավարական երեք տասնյակից ավելի հայցեր, որոնք թիրախավորում են իրավապաշտպաններին, բնապահպան ակտիվիստներին, ինչպես նաև լրագրողներին: Հայաստանում լրագրողների դեմ 2023 թվականին ներկայացվել է 16 դատական հայց, իսկ 2022 թվականին դրանց թիվը եղել է 30[21]: Հիմնականում այդ դատական հայցերը ներկայացվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիման վրա, որը նախատեսում է պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները: Վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել սահմանված 3 մլն դրամի չափով փոխհատուցում, իսկ զրպարտության դեպքում՝ 6 մլն դրամի փոխհատուցում[22]: Այս տուգանքի չափերը զգալիորեն ավելացվել են 2021 թվականին:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստացի տվյալներ հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

SLAPP-երի մեծ մասը ներկայացվել են խոշոր ընկերությունների՝ Լիդիան Արմենիա հանքարդյունաբերական ընկերության, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի և «Ռատկո» կառուցապատող ընկերության, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից:

Այսպես, Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը 7 հայց է ներկայացրել լրատվամիջոցների դեմ՝ Ժողովուրդ թերթի, Օրագիր Մեդիա ՍՊԸ-ի (2 հայց), Սիվիլիթաս հիմնադրամի, 168.am և լրագրող Դավիթ Սարգսյանի, Փաստինֆո ՍՊԸ-ի, լրագրող Բորիս Թամոյանի դեմ՝ պատիվն, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները հերքելուն պարտավորեցնելու և դրամական փոխհատուցում վճարելու պահանջներով: Այս գործերի մեծ մասը դեռևս քննվում են:

168.am և լրագրող Դավիթ Սարգսյանի գործով (ԵԴ/13020/02/23) տեսանյութ էր հրապարակվել՝ Տիգրան Ավինյանի հարցազրույցներից հատվածներ, նրա ընտանիքի, ընկերների բիզնեսների, ունեցվածքի մասին: Տիգրան Ավինյանի միջնորդության հիման վրա աննախադեպ 9 մլն ՀՀ դրամ գումարի չափով արգելանք էր դրվել պատասխանող Դավիթ Սարգսյանի սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա և «168 ժամ» ՍՊԸ-ի անշարժ գույքի վրա նույն չափով արգելանքը մերժվել էր: Դավիթ Սարգսյանի սեփականության վրա դրված արգելքը դատարանի կողմից հետագայում վերացվել էր: Տվյալ գործը դեռևս քննվում է:

21 «Հայաստանում լրագրողների դեմ դատական հայցերի թիվն աճել է» 22 հունիս, 2023թ. https://media.am/hy/news-room/2023/06/22/35507/

22 ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 1087.1, 7-րդ և 8-րդ մասեր

Մեկ այլ գործով Քաղաքացիական պայմանագիր (ՔՊ) կուսակցությունը դիմել է Իրազեկ քաղաքացիների միավորում հասարակական կազմակերպության դեմ՝ լրատվական նյութի համար այն մասին, որ ՔՊ-ն օգտագործում է այլ համայնքների վարչական ռեսուրսը՝ Երևանի ընտրությունների համար ձայներ հավաքելու մեջ: ՔՊ-ի միջնորդության հիման վրա դատարանը որոշել էր նաև հայցի ապահովման միջոց կիրառել՝ հայցագնի՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով արգելանք դնել կազմակերպությանը պատկանող գույքի վրա, ինչը հետագայում վերացվել էր: (ԵԴ2/25937/02/23)

ԼԻԴԻԱՆ-ԱՐՄԵՆԻԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՁԵՌՆՎԱԾ ՀԱՅՑԵՐ

Լիդիան հանքարյունաբերական ընկերությունը նախաձեռնել է Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործումը: Ընկերության կողմից առնվազն 19 SLAPP է ներկայացվել բնապահպանների ու իրավապաշտպանների դեմ: Այս դատական հայցերը զգալի ֆինանսական և հոգեբանական ճնշում են դնում ակտիվիստների վրա՝ փաստացիորեն սահմանափակելով նրանց աշխատանքն ու վախեցնելով մյուսներին՝ բարձրաձայնելու իրավունքների խախտումների կամ հանքարդյունաբերության հետևանքով առաջացած բնապահպանական վնասների վերաբերյալ հարցերը: Դատական գործերին զուգահեռ, որոշ ակտիվիստներ ենթարկվել են ատելության խոսքի և ոտնձգությունների սոցիալական մեդիայում[23]: Մասնավորապես, հանքարդյունաբերական որոշ ընկերություններ արշավներ են իրականացրել՝ իբր թե հայաստանյան բնապահպանական կազմակերպությունները *«սպասարկում են ադրբեջանական շահը»*[24]:

Վերլուծելով Լիդիան Արմենիա ընկերության կողմից նախաձեռնված հայցերը, կարող ենք արձանագրել, որ բազմաթիվ գործեր առանձնանում են իրենց դատավարական երկարաձգումներով: Շատ գործեր տևել են տարիներ (օրինակ՝ Լևոն Գալստյանի (ԵԴ/16785/02/18) դատավարությունը շարունակվում է ավելի քան 5 տարի): Հայցվորը հաճախ փոփոխել է իր պահանջները, ինչը վկայում է դատավարական ճնշումը պահպանելու մարտավարական մոտեցման մասին: Գործով նոր քննություն է սկսվել, ինչը ֆինանսական և հոգեբանական լրացուցիչ ճնշում է պատասխանողի համար:

Դատարանի վճիռները անկանխատեսելի են, նույնանման արտահայտությունների դեպքում տույժերը զգալիորեն տարբերվում են: Օրինակ Հայկ Գրիգորյանը ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի վճռով տուգանվել է 100,000 ՀՀ դրամ՝ «Հանցագործ Լիդիան Արմենիան շարունակում է գնել վաճառվող պաշտոնյաներին» արտահայտության համար (ԵԴ/2192/02/19), իսկ Վերաքննիչ դատարանը պարտավորեցրել է Թեհմինե Ենոքյանին վճարել 1 միլիոն ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի և զրպարտության դիմաց նյութական փոխհատուցում՝ «Լիդիանը բազմաթիվ անգամ պրովոկացիաներ է արել, կեղծ տեղեկատվություն է տարածել, թշնամանք է փորձել հրահրել համայնքային, միջհամայնքային նաև միջպետական վեճեր է փորձել հրահրել» արտահայտության համար (ԱՎԴ3/0965/02/18):

Դատարանները հաճախ մասնակիորեն են բավարարել հայցվորների պահանջները՝ պարտավորեցնելով պատասխանողներին հրապարակային հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և մերժել հայցվորի դրամական փոխհատուցման պահանջը, կամ ավելի նվազ դրամական փոխհատուցում սահմանել, քան հայցվոր կողմը պահանջել է: Այնուամենայնիվ, եղել է նաև դրամական փոխհատուցումների կիրառության ավելի խստացված մոտեցում: Օրինակ Թեհմինե Ենոքյանի գործի դեպքում, Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պարտավորեցրել էր, որ Ենոքյանը հերքեր կատարված արտահայտությունը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը 1 միլիոն նյութական փոխհատուցման վճիռ է կայացրել (ԱՎԴ3/0965/02/18):

23 David Hoffman, Fidanka Bacheva-McGrath, "SLAPPd: the Armenian activists fighting a mining multinational's lawsuits" , 22 June 2020, https://bankwatch.org/blog/slappd-the-armenian-activists-fighting-a-mining-multinational-s-lawsuits
24 ՀԿ-ների հայտարարությունը, https://hcav.am/statement-07-02-2024/

ճդեպքում Լիդիանը պահանջից հրաժարվել է, ինչի արդյունքում գործերի վարույթները դատարանում կարճվել են (Գագիկ Գրիգորյան ԱՎԴ3/0004/02/20, Արփինե Գալֆայան ԵԴ/25255/02/20, Գևորգ Սաֆարյան, ԿԴ2/2677/02/19 և այլն): Ի պատասխան SLAPP-երի, իրավապաշտպաններ Նազելի Վարդանյանն ու Թեհմինե Ենոքյանը դիմել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ խոսքի ազատության և արդար դատավարության իրավունքների խախտման վերաբերյալ[25]:

Մեկ գործով Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը Լիդիան Արմենիա ընկերությունն ընդդեմ Հայկական բնապահպանական ճակատի համակարգող խորհրդի անդամ Լևոն Գալստյանի, երրորդ անձ՝ Սիվիլիթաս հիմնադրամի՝ Լևոն Գասպարյանին զրպարտություն համարվող տվյալները հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցման պահանջների մասին հայցը մերժել է: ՀՀ վերաքննիչ դատարանը բողոքը չի ընդունել վարույթ (ԵԴ/16785/02/18):

Անհրաժեշտ է նշել, որ իրավապաշտպանների կողմից բարձրացրած հարցերը մեծ կարևորություն ունեն, ներկայացնում են հանրային շահը և հիմնված են հիմնավոր հետազոտությունների վրա: Նրանք նշում են օրենսդրական խախտմամբ իրականացվող գործընթացների մասին, ինչի մասին նաև խոսում են միջազգային փորձագետները իրենց կողմից 2019 թվականին իրականացված անկախ հետազոտության հիման վրա կազմված զեկույցում[26]: Այս փորձագետները զեկույցում նշում են, որ Ամուլսարում հանքի շահագործման ծրագրի հաստատումը տեղի է ունեցել ՀՀ օրենսդրության և շրջակա միջավայրի պաշտպանության և սոցիալական քաղաքականության խախտմամբ՝ ստեղծելով շրջակա միջավայրի և կենսաբազմազանության համար վտանգներ տվյալ տարածքում[27]: Ոլորտի փորձագետները նաև արձանագրում են, որ այս ծրագիրը սպառնում է Սևանա լճին՝ հաշվի առնելով հանքավայրի հարևանությամբ գտնվող սուլֆիդային հանքանյութերը, քանի որ հանքը գտնվում է ստորգետնյա ջրատար թունելների վերևում, որոնք ջուր են մատակարարում լճին[28]:

25 SLAPP-երի այս խնդրի մասին հայտարարություն են արել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային իրավապաշտպան խմբեր ու կազմակերպություններ https://rightsindevelopment.org/news/armenia-environmental-defenders-defamation/

26 Andrey Kovatchev, Elena Tsingarska-Sedefcheva, Andrey Ralev, Balkani Wildlife Society, "Biodiversity offsetting and other problems of the ESIA of Amulsar gold project in Armenia", January 2019, https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar.-Report-2-Biodiversity-min.pdf

27 Նույն տեղում:

28 Narine Khachatryan, Monitoring the Amulsar Armenian Gold Mine Project With Planet Satellite Imagery
August 10, 2017, https://www.bellingcat.com/news/rest-of-world/2017/08/10/monitoring-amulsar-armenian-gold-mine-project-planet-satellite-imagery/

ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՑԵՐ

2023-2024 թթ. ընթացքում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից ներկայացվել է 10 SLAPP, որոնցից 5-ը Դատաբլոգ ՍՊԸ-ի դեմ: Ներկայացվում են զրպարտություն համարվող փաստացի տեղեկությունները հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին հայցեր: Դատաբլոգի դեմ ներկայացված գործերից մեկի դեպքում դատական ակտը հրապարակվել է (ԵԴ2/0915/02/24): Դատարանը մասնակի բավարարել է հայցը՝ պարտավորեցրել է Դատաբլոգ ՍՊԸ-ին հրապարակել հերքում, և հօգուտ Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց փոխհատուցման գումար: Հարկ է նշել, որ տվյալ դեպքում, ինչպես նաև 3 այլ գործերի դեպքում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը պահանջել է 6,000,000 ՀՀ դրամ որպես փոխհատուցման գումար, ինչ առավելագույն գումարն է, 1 դեպքում 3.000.000 ՀՀ դրամ: Դատաբլոգ ՍՊԸ-ի դեմ մնացած 4 գործերով ներկայացվել է միջնորդություն գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու վերաբերյալ: Այս գործերով դատալեքսում դատական ակտեր հրապարակված չեն:

Առաջին ատյանի դատարանի կողմից վճիռ է կայացվել նաև ընդդեմ Օրագիր Մեդիա ՍՊԸ-ի գործով: Հայցը մասնակի բավարարվել է: Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ն պահանջել էր 6 մլն ՀՀ դրամ որպես պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցում, դատարանը բավարարել է 200.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև պարտավորեցրել է Օրագիր մեդիա ՍՊԸ-ին հրապարակայնորեն հերքել հրապարակված նյութը:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից ներկայացված մնացած SLAPP-երը դեռ ընթացքի մեջ են:

Հարկ է նշել, որ վստահելի աղբյուրներ կան Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից հանքի շահագործման արդյունքում համայնքների և շրջակա միջավայրի վրա ունեցած բացասական ազդեցության վերաբերյալ[29]:

29 Էկոլուր, «Ողջի գետն աղտոտվել է ՁՊՄԿ-ի պոչերով» https://www.ecolur.org/hy/news/sos/voghji-river-pollutedwith-zc-mc-tails/11275/

ՌԱՏԿՈ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՑԵՐ

Ռատկո ՍՊԸ-ն ընդդեմ Սեդա Գրիգորյանի 3 հայցադիմում է ներկայացրել Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և 1 հաղորդում է ներկայացրել Ոստիկանություն: Սեդա Գրիգորյանը վավերագրող ռեժիսոր է, Երևանի Ֆիզիկայի գիտավանի բնակիչ: Ռատկո ՍՊԸ-ն նշված գիտավանում նախաձեռնել է կառուցապատման գործընթացներ[30]:

Մեկ գործով (ԵԴ/11310/02/22) Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վճռել է Ռատկո ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Սեդա Գրիգորյանի՝ զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների հրապարակայնորեն հերքման և զրպարտության համար նախատեսված 2 մլն ՀՀ դրամ փոխհատուցման պահանջի մասին, մերժել: Դատարանը նշել է, որ տվյալ գործով անհրաժեշտ է պատասխանել այն իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք Սեդա Գրիգորյանը կարող է պատասխանատվություն կրել «ՖիզԳորոդոկ Երևան» ֆեյսբուքյան էջում հրապարակված նյութի համար: Դատարանը արձանագրել է, որ Ռատկո ՍՊԸ-ն գործի քննության ընթացքում Դատարանին չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ «ՖիզԳորոդոկ Երևան» ֆեյսբուքյան էջում կատարված հրապարակումը կատարվել է Սեդա Գրիգորյանի կողմից, որպիսի փաստի ապացուցման պարտականությունը կրում էր վերջինս, ուստի նման փաստի չապացուցման պարագայում դրա բացասական հետևանքները կրում է հայցվորը՝ Ռատկո ՍՊԸ-ն: Այսպիսով, Դատարանը մերժել է հայցը:

Մեկ այլ գործով Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նույնպես վճռել էր Ռատկո ՍՊԸ ընդդեմ Սեդա Գրիգորյանի, երրորդ անձ՝ Նյուզ Էյ Էմ ՍՊԸ՝ զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների հրապարակայնորեն հերքման և զրպարտության համար նախատեսված փոխհատուցման պահանջի մասին, մերժել և հոգուտ Սեդա Գրիգորյանի բռնագանձել 250.000 ՀՀ դրամ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար (ԵԴ2/44225/02/21): Սակայն Ռատկո ՍՊԸ-ն բողոք էր ներկայացրել Վերաքննիչ դատարան, որն այն մասնակի բավարարել է: Մի քանի պահանջների մասով Վերաքննիչ դատարանը գործը ամբողջ ծավալով ուղարկել էր նոր քննության:

Սեդա Գրիգորյանը տեսանյութերում բարձրաձայնել էր այն հարցի մասին, որ Ռասկո ՍՊԸ-ն պատշաճ իրավական փաստաթղթեր չունի, մակերեսի տարածքի չափ է կեղծվել և այլն:

Նոր քննության շրջանակներում Առաջին ատյանի դատարանը Ռատկո ՍՊԸ-ի հայցադիմումը բավարարել է մասնակի՝ պարտավորեցնելով Սեդա Գրիգորյանին հրապարակայնորեն հերքում հրապարակել, և բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում, մնացած 1,900.000 ՀՀ դրամի չափով գումարի բռնագանձնման մասով հայցը մերժվել է:

Հատկանշական է, որ Ռատկո ՍՊԸ-ն երկու գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն է ներկայացրել, որոնցից մեկի դեպքում հայցագնի՝ 4.000.000 ՀՀ դրամի չափով՝ պահանջելով արգելանք դնել Սեդա Գրիգորյանին պատկանող գույքի վրա (ԵԴ/61615/02/22):

30 Երևանի «Ֆիզգորոդոկ»-ում բարձրահարկի կառուցումը՝ բողոքի ու հրմշտոցի պատճառ. կան բերման ենթարկվածներ, https://www.azatutyun.am/a/31421694.html

Դատարանները մերժել են այս միջնորդությունները:

Ինչպես վերևում նշվեց, բացի քաղաքացիական հայցերից Ռատկո ՍՊԸ-ն Ոստիկանությունում նաև հաղորդում էր ներկայացրել իր գույքին վնաս պատճառելու վերաբերյալ: Շինհրապարակի ժամանակավոր մետաղյա թիթեղների վրա գրաֆիտի գրություններ էին արվել («Հանրային տարածք», «Ազատ ծառեր», «Ազատագրենք Գորոդոկը»): Ոստիկանները ժամանել են Սեդա Գրիգորյանի բնակարան՝ խուզարկություն իրականացնելու վերաբերյալ դատարանի որոշմամբ: Համաձայն որոշման՝ խուզարկությունն իրականացվում էր գրաֆիտային ներկանյութի տարան հայտնաբերելու նպատակով:

Դատարանի որոշման մեջ նշված չի եղել, թե ինչ կարգավիճակով է Սեդա Գրիգորյանը ներգրավված գործում: Ոստիկանները խուզարկել են ողջ բնակարանը, ինչի արդյունքում ոչինչ չեն հայտնաբերել և չեն առգրավել: Հասարակական կազմակերպությունները հանդես են եկել հայտարարությամբ[31]: Տվյալ քրեական գործը կարճվել է:

Կանանց Ռեսուրսային Կենտրոնը հայտնել է 2024 թվականի սեպտեմբերին քաղաքացիական հասարակության համար անցկացված SLAPP-երի մասին դասընթացի ընթացքում, որ կանանց իրավունքների պաշտպանները նույնպես թիրախավորվում են, օրինակ՝ տարբեր իրավական հետապնդումների միջոցով: 2019 թվականին Կենտրոնի սեռական դաստիարակության վերաբերյալ կայքը հատկապես թիրախավորվեց ծայրահեղ աջ խմբերի կողմից, որոնք բողոքներ ներկայացրեցին Ոստիկանություն՝ պահանջելով կայքը ստուգել պոռնոգրաֆիայի տարածման համար: Կայքը ստուգվեց Ոստիկանության կողմից, և ՀՀ դատախազության որոշմամբ հարուցվեց քրեական գործ: Սակայն պոռնոգրաֆիայի տարածման որևէ ապացույց չի հայտնաբերվել:

Այսպիսով, այս գործերը ընդգծում են, որ վերոգրյալ հայցերն ունեն թիրախավորված բնույթ՝ իրավապաշտպանների, ակտիվիստների ու լրագրողների դեմ: Գործերը նախաձեռնվում են պաշտոնատար անձանց, հանքարյունաբերական, շինարարական ընկերությունների կողմից: Իրականացվում են շարունակական փորձեր՝ ճնշելու բնապահպանական և կորպորատիվ պրակտիկաների վերաբերյալ քննադատությունները: Կրկնվող գործերը, օրինակ Դատաբլոգ ՍՊԸ-ի, Թեհմինե Ենոքյանի, Սեդա Գրիգորյանի դեմ, ցույց են տալիս քննադատող կողմերի վրա իրավական ճնշման ռազմավարություն: Պահանջների հաճախակի փոփոխությունները, բողոքարկումները մատնանշում են ընթացակարգային ռազմավարություններ, որոնք ուղղված են գործերի ձգձգմանը: Այս հայցերի կուտակային ազդեցությունը, ամենայն հավանականությամբ, զսպում է հանրային քննադատությունը և մեդիայի հետաքննությունները՝ խաթարելով խոսքի ազատությունն ու հաշվետվողականությունը:

Բացի այդ, այս դատական գործերը ծանր ֆինանսական և հոգեբանական բեռ են դնում ակտիվիստների վրա[32]՝ արգելափակելով նրանց գործունեությունը և կանխելով մյուսներին արտահայտվել մարդու իրավունքների խախտումների կամ հանքարդյունաբերական գործունեության պատճառած էկոլոգիական վնասների դեմ: Դատական գործերի հետ զուգահեռ, որոշ ակտիվիստներ սոցիալական մեդիայում ենթարկվել են ատելության խոսքի և հետապնդումների:

31 Հայտարարություն՝ «Ֆիզգորոդոկի» բնակիչ, վավերագրող ռեժիսոր Սեդա Գրիգորյանի բնակարանի խուզարկման վերաբերյալ, 15 նոյեմբերի, 2021թ. https://hetq.am/hy/article/137842

32 Հարկ է նշել, որ գրեթե բոլոր գործերով դատարանների կողմից հայցերի բավարարման դեպքում,բացի ոչ նյութական վնասի փոխհատուցման պարտավորությունից, պատասխանողների վրա դրվում է պետական տուրքի և հայցվորի փաստաբանական ծախսերի փոխհատուցման պարտավորություն:

Խնդիրն արդեն լայն ուշադրություն է ստացել մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից, այդ թվում՝ ՄԱԿ-ի[33], Եվրոպայի խորհրդի[34], «Բիզնես և մարդու իրավունքներ» ռեսուրս կենտրոնի[35], «Եվրոպայի Երկրի Ընկերներ»[36] կազմակերպության, Բանկվոչի (Bankwatch)[37], «Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստանի»[38] և բազմաթիվ այլ կառույցների կողմից: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության կողմից համապատասխան արձագանք չի եղել:

33 Mandates of the Special Rapporteur on the situation of human rights defenders; the Working Group on the issue of human rights and transnational corporations and other business enterprises; the Special Rapporteur on the issue of human rights obligations relating to the enjoyment of a safe, clean, healthy and sustainable environment and the Special Rapporteur on the promotion and protection of the right to freedom of opinion and expression, 12 June 2023, https://spcommreports.ohchr.org/TMResultsBase/DownLoadPublicCommunicationFile?gId=28143&fbclid=IwZXhobgNhZW0CMTAAARorydYG5pJLc8zgX4OVr5E-ymcNxVtpUtzDNNjZu7W-W56KLzK8eIoonWWI_aem_AWxe7AAGcpd5XL7K8tatIuiMjkAmrFbL-J_4JP3ePpuGB3xzIzV5Y17HOUU4JJRUclg_xJhtgqR3XI21PrXMNOUV

34 Convention on the Conservation of European Wildlife and Natural Habitats
Standing Committee, “The Amulsar gold mine project and its impacts on Emerald Network sites”, 7 November 2023 https://rm.coe.int/files07e-2023-armenia-amulsar-gold-ngo-report/1680aa905d

35 https://www.business-humanrights.org/en/latest-news/tehmine-yenokya/

36 Friends of the Earth Europe, Declaration on the abusive use of legal proceedings to silence activists in Armenia, 3 July 2024 https://friendsoftheearth.eu/news/declaration-abusive-use-legal-proceedings-silence-activists-armenia/

37 Emily Gray, Fidanka Bacheva-McGrath, Nina Lesikhina, CEE Bankwatch Network, “Amulsar’s costs to human rights and threats to environmental defenders”, 4 August 2022, https://bankwatch.org/blog/amulsar-s-costs-to-human-rights-and-threats-to-environmental-defenders

38 Open Society Foundations Armenia, “Civil society statement regarding the suppression of environmental activists by the judgments of the judicial system in the Republic of Armenia” Press Release, 8 December 2022 https://www.osf.am/2022/12/press-release-08-12-2022-civil-society-statement-regarding-the-suppression-of-environmental-activists-by-the-judgments-of-the-judicial-system-in-the-republic-of-armenia/

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործադիր և օրենսդիր մարմիններին.

1. Ընդունել SLAPP-երի դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրություն՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի CM/Rec(2024)2 առաջարկությունում և ԵՄ Եվրոպական միության 2024/1069 դիրեկտիվում ներկայացված սկզբունքները:
2. SLAPP-երի զոհերի համար աջակցության մեխանիզմներ նախատեսել, մասնավորապես իրավաբանական և հոգեբանական աջակցություն:

Դատավորների միությանը, Բարձրագույն դատական խորհրդին, Փաստաբանների պալատին.

3. Իրականացնել դատավորների, փաստաբանների իրազեկում SLAPP-երի վերաբերյալ:

Հասարակական և միջազգային կազմակերպություններին.

4. Նախաձեռնել SLAPP-երի վերաբերյալ հանրային իրազեկման ուղղված միջոցառումներ:

Կայք՝	hrhyerevan.org
Սոցիալական ցանց՝	facebook.com/HRHYerevan
	instagram.com/HRHYerevan
	x.com/HRHYerevan
Հեռ.՝	+374 10 329032
Էլ. հասցե՝	info@hrhyerevan.org
Հասցե՝	Հովսեփ Էմին 119/2, Երևան 0012, Հայաստան